ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-402-Ն օրենքի 41.1-ին հոդվածի 2-րդ մասի՝

1) 2-րդ կետի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

«

Մաքսային ծառայողի աշխատա-վարձի մակար-դակները	Հիմնական աշխատա-վարձի բնականոնաճը	Մ/Ծ կրտսեր պաշտոններ			Մ/Ծ առաջատար պաշտոններ		Մ/Ծ գլխավոր պաշտոններ			Մ/Ծ բարձրագույն պաշտոններ		
		վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի մաքսային տեսուչ	վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի ավագ մաքսային տեսուչ	վերադաս մաքսային մարմնի տեսուչ	վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի գլխավոր մաքսային տեսուչ վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի հերթափոխի պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի բաժանմունքի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի հերթափոխի պետի տեղակալ	վերադաս մաքսային մարմնի մաքսատան կամ մաքսային կետի բաժանմունքի պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան բաժնի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի ավագ մաքսային տեսուչ, վերադաս մաքսային մարմնի քննիչ	վերադաս մաքսային մարմնի մաքսատան բաժնի պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսային կետի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի բաժանմունքի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի հերթափոխի պետ, վերադաս մաքսային մարմնի հերթափոխի պետի տեղակալ	վերադաս մաքսային մարմնի գլխավոր մաքսային տեսուչ, վերադաս մաքսային մարմնի ավագ քննիչ, վերադաս մաքսային մարմնի բաժնի պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի բաժանմունքի պետ, վերադաս մաքսային մարմնի հատկապես կարևորագույն գործերով քննիչ	վերադաս մաքսային մարմնի մաքսային կետի պետ, վերադաս մաքսային մարմնի մաքսատան պետի տեղակալ, վերադաս մաքսային մարմնի բաժնի պետ, վերադաս մաքսային մարմնի վարչության պետի տեղակալ	վերադաս մաքսային մարմնի մաքսատան պետ	վերադաս մաքսային մարմնի վարչության պետ	վերադաս մաքսային մարմնի ղեկավարի տեղակալ
11.	Աճ չկա	1.69	2.16	2.50	2.85	3.25	3.72	4.27	4.90	5.42	5.95	6.48

10.	երեք տարին մեկ	1.65	2.11	2.46	2.82	3.22	3.67	4.22	4.83	5.37	5.90	6.42
9.		1.60	2.06	2.43	2.79	3.19	3.63	4.17	4.76	5.32	5.84	6.37
8.		1.56	2.02	2.39	2.76	3.15	3.59	4.11	4.70	5.27	5.79	6.32
7.	երկու տարին մեկ	1.51	1.97	2.36	2.73	3.11	3.55	4.06	4.64	5.21	5.74	6.26
6.		1.46	1.93	2.32	2.69	3.06	3.50	4.01	4.57	5.16	5.69	6.21
5.		1.42	1.88	2.30	2.66	3.02	3.46	3.96	4.51	5.11	5.63	6.16
4.	յուրա-քանչյուր տարի	1.37	1.83	2.26	2.61	2.98	3.41	3.90	4.47	5.06	5.58	6.11
3.		1.32	1.79	2.23	2.58	2.94	3.36	3.85	4.41	5.00	5.53	6.05
2.		1.28	1.74	2.19	2.54	2.90	3.32	3.79	4.34	4.95	5.48	6.00
1.		1.23	1.69	2.16	2.50	2.85	3.25	3.72	4.27	4.90	5.42	5.95

»:

2) 4-րդ կետում «7.1 գործակցով» բառերը փոխարինել «7.75 գործակցով» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի

1. Անհրաժեշտությունը. Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ նախագծերի փաթեթ) ընդունումը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն ապահովելու համար ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների աշխատանքի վարձատրության՝ անմիջականորեն օրենքով սահմանվող դրույքաչափերի փոփոխման համար համապատասխան իրավական հիմքեր ստեղծելու, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ժամանակ իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած որոշ խնդիրներ կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2.1. 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որի 28-րդ հոդվածի համաձայն՝ նույն պահից ուժը կորցրած են ճանաչվելու «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է մեկ հարկատեսակի՝ եկամտային հարկի կիրառում վարձու աշխատողների համար, ներկայումս գործող եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների փոխարեն: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցնում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ աշխատողին հարկումից հետո վճարվող աշխատավարձի գումարի նվազման, ապա գործատուն իր միջոցների հաշվին կրում է լրացուցիչ պարտավորություն՝ վարձու աշխատողին այդ տարբերությունը վճարելու համար:

Հաշվարկները ցույց են տալիս, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանրային ծառայության ոլորտում վարձու աշխատողների աշխատավարձերից գանձվելիք եկամտային հարկի գումարը գերազանցելու է մինչև նշված օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողների աշխատավարձից գանձվող եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարի հանրագումարը: Ուստի, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն ապահովելու համար խնդիր է առաջանում բարձրացնելու ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, որի համար ներկայումս համապատասխան իրավական հիմքերը բացակայում են:

2.2. Ներկայումս քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճի շարունակականությունը կախված է աշխատանքի անընդմեջությունից և սահմանափակվում է, եթե քաղաքացիական ծառայության պաշտոնում քաղաքացիական ծառայողի աշխատանքի ընդմիջումը գերազանցում է վեց ամիսը: Հաճախ, համապատասխան մարմինների կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում քաղաքացիական ծառայողները նույն պաշտոնները զբաղեցնում են պայմանագրային հիմունքներով՝ մինչև այդ պաշտոնների համար մրցույթ հայտարարելը: Պայմանագրային հիմունքներով պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը վեց ամիսը գերազանցելու դեպքում, քաղաքացիական ծառայողը զրկվում է բնականոն աճի կիրառմամբ պաշտոնային դրույքաչափի ձեռք բերած բարձր մակարդակի իրավունքից և պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է առաջին մակարդակով:

Քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հերթական միավոր ավելացումը, բնականոն աճով պայմանավորված, իրականացվում է այդ իրավունքի ծագմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից, բացառությամբ այն քաղաքացիական ծառայողների, ովքեր հունվարի 1-ի դրությամբ ունեն ավելի քան վեց ամսվա ստաժ: Այս առումով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով քաղաքացիական ծառայողների համար աշխատանքի անհավասար պայմաններ է սահմանված:

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող աշխատողների համար լրացուցիչ վարձատրության իրավունք է սահմանված ՀՀ օրենսդրությամբ: Քաղաքացիական ծառայողներին տրվող լրացուցիչ վարձատրության բոլոր տեսակները համակարգված ներկայացնելու նպատակով՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում անհրաժեշտ է սահմանել նաև գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողներին տրվող աշխատավարձի հավելումը:

«Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, ինչպես նաև 13-րդ հոդվածներում հստակ տարանջատված չէ հատուկ առաջադրանքների կատարումը աշխատանքի որակյալ կատարումից, և այդ հիմքերով պարգևատրումը ենթադրում է երկու պայմանների առկայություն: Օրենքի 13-րդ հոդվածում սահմանված չէ նաև, թե որ մարմինն է վճարում քաղաքացիական ծառայողի պարգևատրումը, որի իրավունքը քաղաքացիական ծառայողը ձեռք է բերել տարբեր մարմիններում:

Նախագծով առաջարկվում է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված աշխատավարձի բնականոն աճի կիրառման սահմանափակումը հանել այն դեպքում, երբ քաղաքացիական ծառայողը զբաղեցրել է հանրային ծառայության պաշտոններ:

3. Առաջարկվող կարգավորման նպատակը և բնույթը. Նախագծերի փաթեթի ընդունման նպատակը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան հանրային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ժամանակ իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած վերը նշված խնդիրների կանոնակարգումն է: Կանոնակարգումը նախատեսվում է իրականացնել ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը (կամ դրանց հաշվարկման գործակիցները, տոկոսները) սահմանող «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Վերահսկիչ պալատի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև ՀՀ դատական և ՀՀ ընտրական օրենսգրքերում համապատասխան փոփոխություններ կատարելու ճանապարհով:

4. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Նախագծերի փաթեթը չի նախատեսում տվյալ բնագավառում իրականացվող գործող քաղաքականության փոփոխություն:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք. Նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և մշակման գործընթացում այլ ինստիտուտներ և անձիք չեն ներգրավվել:

6. Ակնկալվող արդյունքը. Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ կապահովվի

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը: Մասնավորապես, ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը (կամ դրանց հաշվարկման գործակիցները, տոկոսները) սահմանող վերը նշված օրենքներում կատարվող փոփոխությունների արդյունքում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը կկարգավորվեն այնպես, որ եկամտային հարկով հարկվելուց հետո կպահպանվի աշխատավարձի նախկին մակարդակը, որը տրվում էր մինչև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը,

- լրացուցիչ վարձատրության սահմանման դեպքերի հստակեցում, քաղաքացիական ծառայողների վարձատրության բնականոն աճի շարունակականության ապահովում՝ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու դեպքում, աշխատավարձի բնականոն

աճի կիրառում աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվանից, հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրումների տարանջատում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՈԴՎԱԾ 1. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-409-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի տասնմեկերորդ պարբերությունը «հատուկ առաջադրանքների» բառերից հետո լրացնել «կամ որակյալ աշխատանքի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 3-րդ կետում «ինչպես նաև հատուկ առաջադրանքների որակյալ կատարման համար պարգևատրումները» բառերը փոխարինել «ինչպես նաև հատուկ առաջադրանքների կամ աշխատանքի որակյալ կատարման համար պարգևատրումները» բառերով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով՝

«5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողներին տրվող հավելումը»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ.

Աշխատա-վարձի մակար-դակները	Աշխատա-վարձի բնա-կանոն աճը	Կրտսեր պաշտոններ			Առաջատար պաշտոններ			Գլխավոր պաշտոններ			Բարձրագույն պաշտոններ	
		3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	3-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ	2-րդ ենթա-խմբի սանդ-ղակ	1-ին ենթա-խմբի սանդ-ղակ
11	Աճ	1.65	1.91	2.2	2.52	2.91	3.36	3.84	4.39	5.02	5.75	6.6

	չկա											
10	Երեք տարին մեկ	1.61	1.85	2.13	2.45	2.83	3.27	3.75	4.27	4.89	5.59	6.42
9		1.57	1.8	2.07	2.38	2.75	3.17	3.64	4.16	4.76	5.45	6.25
8		1.53	1.76	2.01	2.32	2.67	3.09	3.56	4.05	4.63	5.3	6.08
7	Երկու տարին մեկ	1.48	1.7	1.96	2.26	2.6	2.99	3.47	3.95	4.51	5.16	5.91
6		1.45	1.65	1.91	2.2	2.52	2.91	3.36	3.84	4.39	5.02	5.75
5		1.41	1.61	1.85	2.13	2.45	2.83	3.27	3.75	4.27	4.89	5.59
4	Յուրա-քանչյուր տարի	1.37	1.57	1.8	2.07	2.38	2.75	3.17	3.64	4.16	4.76	5.45
3		1.33	1.53	1.76	2.01	2.32	2.67	3.09	3.56	4.05	4.63	5.3
2		1.3	1.48	1.7	1.96	2.26	2.6	2.99	3.47	3.95	4.51	5.16
1		1.26	1.45	1.65	1.91	2.2	2.52	2.91	3.36	3.84	4.39	5.02

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 10-րդ

1) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.2-րդ մասով.

«Քաղաքացիական ծառայության ստաժի վեց ամսից ավելի ընդմիջման դեպքում քաղաքացիական ծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով և 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, եթե քաղաքացիական ծառայության ստաժի ընդմիջման ընթացքում քաղաքացիական ծառայողն անընդմեջ զբաղեցրել է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանրային ծառայության պաշտոն: Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը քաղաքացիական ծառայողի աշխատավարձի բնականոն աճի հաշվարկման հիմք չէ:».

2) հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հերթական միավոր ավելացումը, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, իրականացվում է աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվա 1-ից՝ սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:»

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1) 3.1-ին մասի առաջին նախադասությունը «բնույթ» բառից հետո լրացնել «, որը վճարվում է այն մարմնից, որտեղ քաղաքացիական ծառայողի կատարողականը գնահատվել է դրական:» բառերով.

2) 4-րդ մասի առաջին պարբերությունում «, ինչպես նաև» բառերը փոխարինել «կամ» բառով, իսկ երկրորդ պարբերության «որակյալ կատարման» բառերը՝ «կամ աշխատանքի որակյալ կատարման» բառերով:

ՀՈԴՎԱԾ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի

1. Անհրաժեշտությունը. Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ նախագծերի փաթեթ) ընդունումը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն ապահովելու համար ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների աշխատանքի վարձատրության՝ անմիջականորեն օրենքով սահմանվող դրույքաչափերի փոփոխման համար համապատասխան իրավական հիմքեր ստեղծելու, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ժամանակ իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած որոշ խնդիրներ կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2.1. 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որի 28-րդ հոդվածի համաձայն՝ նույն պահից ուժը կորցրած են ճանաչվելու «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է մեկ հարկատեսակի՝ եկամտային հարկի կիրառում վարձու աշխատողների համար, ներկայումս գործող եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների փոխարեն: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցնում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ աշխատողին հարկումից հետո վճարվող աշխատավարձի գումարի նվազման, ապա գործատուն իր միջոցների հաշվին կրում է լրացուցիչ պարտավորություն՝ վարձու աշխատողին այդ տարբերությունը վճարելու համար:

Հաշվարկները ցույց են տալիս, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանրային ծառայության ոլորտում վարձու աշխատողների աշխատավարձերից գանձվելիք եկամտային հարկի գումարը գերազանցելու է մինչև նշված օրենքն ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողների աշխատավարձից գանձվող եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարի հանրագումարը: Ուստի,

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն ապահովելու համար խնդիր է առաջանում բարձրացնելու ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը, որի համար ներկայումս համապատասխան իրավական հիմքերը բացակայում են:

2.2. Ներկայումս քաղաքացիական ծառայողների աշխատավարձի բնականոն աճի շարունակականությունը կախված է աշխատանքի անընդմեջությունից և սահմանափակվում է, եթե քաղաքացիական ծառայության պաշտոնում քաղաքացիական ծառայողի աշխատանքի ընդմիջումը գերազանցում է վեց ամիսը: Հաճախ, համապատասխան մարմինների կառուցվածքային փոփոխությունների արդյունքում կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում քաղաքացիական ծառայողները նույն պաշտոնները զբաղեցնում են պայմանագրային հիմունքներով՝ մինչև այդ պաշտոնների համար մրցույթ հայտարարելը: Պայմանագրային հիմունքներով պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը վեց ամիսը գերազանցելու դեպքում, քաղաքացիական ծառայողը զրկվում է բնականոն աճի կիրառմամբ պաշտոնային դրույքաչափի ձեռք բերած բարձր մակարդակի իրավունքից և պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է առաջին մակարդակով:

Քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հերթական միավոր ավելացումը, բնականոն աճով պայմանավորված, իրականացվում է այդ իրավունքի ծագմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից, բացառությամբ այն քաղաքացիական ծառայողների, ովքեր հունվարի 1-ի դրությամբ ունեն ավելի քան վեց ամսվա ստաժ: Այս առումով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով քաղաքացիական ծառայողների համար աշխատանքի անհավասար պայմաններ է սահմանված:

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող աշխատողների համար լրացուցիչ վարձատրության իրավունք է սահմանված ՀՀ օրենսդրությամբ: Քաղաքացիական ծառայողներին տրվող լրացուցիչ վարձատրության բոլոր տեսակները համակարգված ներկայացնելու նպատակով՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում անհրաժեշտ է սահմանել նաև գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայողներին տրվող աշխատավարձի հավելումը:

«Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, ինչպես նաև 13-րդ հոդվածներում հստակ տարանջատված չէ հատուկ առաջադրանքների կատարումը աշխատանքի որակյալ կատարումից, և այդ հիմքերով պարգևատրումը ենթադրում է երկու պայմանների առկայություն: Օրենքի 13-րդ հոդվածում սահմանված չէ նաև, թե որ մարմինն է վճարում քաղաքացիական ծառայողի պարգևատրումը, որի իրավունքը քաղաքացիական ծառայողը ձեռք է բերել տարբեր մարմիններում:

Նախագծով առաջարկվում է «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված աշխատավարձի բնականոն աճի կիրառման սահմանափակումը հանել այն դեպքում, երբ քաղաքացիական ծառայողը զբաղեցրել է հանրային ծառայության պաշտոններ:

3. Առաջարկվող կարգավորման նպատակը և բնույթը. Նախագծերի փաթեթի ընդունման նպատակը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան հանրային ծառայողների պաշտոնային դրույքաչափերի, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ժամանակ իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած վերը նշված խնդիրների կանոնակարգումն է: Կանոնակարգումը նախատեսվում է իրականացնել ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը (կամ դրանց հաշվարկման գործակիցները,

տոկոսները) սահմանող «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին», «Վերահսկիչ պալատի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Դատախազության մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև ՀՀ դատական և ՀՀ ընտրական օրենսգրքերում համապատասխան փոփոխություններ կատարելու ճանապարհով:

4. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Նախագծերի փաթեթը չի նախատեսում տվյալ բնագավառում իրականացվող գործող քաղաքականության փոփոխություն:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք. Նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և մշակման գործընթացում այլ ինստիտուտներ և անձիք չեն ներգրավվել:

6. Ակնկալվող արդյունքը. Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ կապահովվի

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը: Մասնավորապես, ՀՀ օրենսդիր, գործադիր (հանրապետական) և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը (կամ դրանց հաշվարկման գործակիցները, տոկոսները) սահմանող վերը նշված օրենքներում կատարվող փոփոխությունների արդյունքում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը կկարգավորվեն այնպես, որ եկամտային հարկով հարկվելուց հետո կպահպանվի աշխատավարձի նախկին մակարդակը, որը տրվում էր մինչև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը,
- լրացուցիչ վարձատրության սահմանման դեպքերի հստակեցում, քաղաքացիական ծառայողների վարձատրության բնականոն աճի շարունակականության ապահովում՝ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու դեպքում, աշխատավարձի բնականոն աճի կիրառում աշխատանքային տարին լրանալուն հաջորդող ամսվանից, հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրումների տարանջատում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ավելացման կամ եկամուտների նվազեցման վերաբերյալ

Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացում կամ եկամուտների նվազեցում տեղի չի ունենա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չկա:

Վերը նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը չի հակասում միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին: